ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԲԻԶՆԵՍՈՒՄ

**ՀՊՏՀ Տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի կայքի հղում**

Ծրագիրը հենվում է բիզնեսի ոլորտում տեղեկատվական համակարգերի գործունեության չորս հիմնական ուղղությունների վրա՝ տվյալների վերլուծության գործիքներ և տվյալագիտության հիմունքներ, ծրագրավորման տեխնոլոգիաներ, ցանցային տեխնոլոգիաներ, ծառայություններ և կիբեռանվտանգություն, ստարտափ կառավարում և նորարարություն:



**Ծրագրի տևողությունը**

1.5 տարի

**Դասապրոցեսը**

շաբաթական 3 անգամ,
18:00-ից հետո

**Ուսման վճարը (տարեկան)**

700.000 ՀՀ դրամ

**Որակավորում**

կառավարման մագիստրոս

# ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

## առաջին կիսամյակ

1.Մասնագիտական օտար լեզու
2.Ձեռնարկատիրության հիմունքները ՏՏ ոլորտում
3.Թվային մարքեթինգ
4.Ծրագրավորման տեխնոլոգիաներ-1 (Python)
5.Ստարտափ կառավարում և նորարարություն
6.ՏՏ նախագծերի կառավարում
7.WEB ծրագրավորման տեխնոլոգիաներ
8.UX/UI նախագծման հիմունքներ

## երկրորդ կիսամյակ

1. Ծրագրավորման տեխնոլոգիաներ-2 (Python)
2.Տվյալների վերլուծության գործիքներ և տվյալագիտության հիմունքներ
3.Մաթեմատիկական մեթոդները տվյալագիտությունում
4.Մեքենայական ուսուցման հիմունքներ
5.Արհեստական նեյրոնային ցանցերի կիրառումը բիզնես վերլուծություններում
6.Բիզնեսի կառավարման թվային համակարգեր
7.Ցանցեր, ցանցային տեխնոլոգիաներ և ծառայություններ
8.Կիբեռանվտանգության հիմունքներ

## երրորդ կիսամյակ

1.Գիտական հետազոտության մեթոդաբանություն
2.Ինովացիոն գործընթացները տեղեկատվական համակարգերում

**Մոդուլ** 11 - **Գիտահետազոտական փորձառություն** (տևողությունը՝ 10 շաբաթ)



# ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ



**Արմեն Ղազարյան**

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

տ.գ.թ, դոցենտ, տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչ



**Քրիստինե Գյոնջյան**

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

դասախոս, մագիստրոսական ծրագրի ղեկավար, Հայաստանի օպերատորների միության տնօրեն



**Արմեն Ավետիսյան**

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

Դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու, աշխատում է Kalgera-ում՝ որպես առաջատար ինժեներ, սովորել է UCL կառավարման դպրոցում (գիտությունների մագիստրոս, Լոնդոն, Անգլիա)։



**Գայանե Կասպարովա**

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

Դասախոս, աշխատում է JAMBI ՍՊԸ-ում՝ որպես ինժեներ-ծրագրավորող։



**Սոնա Համբարյան**

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

Դասախոս, աշխատում է ServiceTitan Armenia-ում՝ որպես տվյալների մշակման մասնագետ։



# ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ



**Գայանե Ղուկասյան**

ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ



**Հովհաննես Մինասյան**

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

Դասախոս, աշխատում է Վինեթի Արմենիա կազմակերպությունում՝ որպես SS նախագծերի կառավարող (Senior Scrum Master)։



**Գրիգորի Սաղյան**

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու, Հայաստանի Ինտերնետի կառավարման խորհրդի քարտուղար



**Արման Սարգսյան**

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

տ.գ.թ, դոցենտ, Հայաստանի բանկերի միության գործադիր տնօրեն



**Սերգեյ Աբրահամյան**

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի գիտաշխատող։

## ԳՈՐԾԸՆԿԵՐ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

arpinet

UNION OF OPERATORS

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջանավարտներն աշխատաշուկայում կարող են զբաղեցնել կառավարման ոլորտի այնպիսի պաշտոններ, որոնք պահանջում են առավել խոր և գիտական մակարդակի տնտեսագիտական և տեխնիկական գիտելիք:

շրջանավարտներ



**Ես էլյան եմ:**

Գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետը, այնուհետև՝ ՀՊՏՀ «SS բիզնեսում» մագիստրոսական ծրագիրը, որի շնորհիվ ստացել եմ նոր մասնագիտություն՝ Search Engine Optimization:

Այժմ աշխատում եմ ամենահետաքրքիր մասնագիտությամբ՝ որպես SEO մասնագետ, շուտով՝ որպես SEO account manager: Այս կրթական ծրագրի շնորհիվ ձեռք եմ բերել մրցունակ և ժամանակակից մասնագիտություն:



**Ողջույն, ես Անին եմ:**

Գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետը, այնուհետև՝ ՀՊՏՀ«ՏՏ բիզնեսում» մագիստրոսական ծրագիրը: 1,5 տարվա ընթացքում ձեռք եմ բերել գիտելիք, որն ինձ օգնում է իմ մասնագիտական ճանապարհին: Նշեմ, որ հենց ուսման ընթացքում ուսումնասիրված առարկան դարձավ իմ սրտի մասնագիտությունը, որն արտացոլում է թվային աշխարհի կարևորագույն գործոններից մեկը: Խոսքը SEO մասնագիտության մասին է:

Այն իրենից ներկայացնում է առաջխաղացում որոնողական համակարգերում, իսկ այժմ ամեն բան կապված է հենց որոնողական համակարգերի հետ: Այսպիսով, մագիստրատուրան ինձ տվեց կարևորներից մեկը՝ սիրելի ու արդիական աշխատանք:

**Ողջույն ես, Հռիփսիմեն եմ:**



Գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետը, այնուհետև՝ ՀՊՏՀ «ՏՏ բիզնեսում» մագիստրոսական ծրագիրը:

**Fnet telecom կազմակերպության մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ղեկավարն եմ** և ամենօրյա աշխատանքում առիթ ունեմ գնահատելու նոր և առաջադեմ գիտելիքի կարևորությունն իմ կյանքում:



## Ես Գոռն եմ:

Գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետը, այնուհետև՝ ՀՊՏՀ «ՏՏ բիզնեսում» մագիստրատրոսական ծրագիրը: Ուսումնառության ընթացքում ստացել եմ թե՛ տեսական գիտելիքներ և թե՛ գործնական հմտությունները ձեռք բերելով դասավանդման նորարարական մեթոդներ՝ բանիմաց դասախոսների շնորհիվ:

**Այժմ աշխատում եմ CRM մենեջեր՝ SoftConstruct կազմակերպությունում:**

## Ես Մերին եմ:



Ուսումնառությունս ստացել եմ ՀՊՏՀ Կառավարման ֆակուլտետում, այնուհետև՝ «ՏՏ-ն բիզնեսում» մագիստրոսական ծրագրով: Երկու մասնագիտություններն էլ սովորել և ավարտել եմ գերազանցությամբ՝ կուտակելով գիտելիքների մեծ պաշար: Մագիստրոսական ծրագրի շնորհիվ էլ ավելի զարգացավ բիզնես մտածողությունս, ծանոթացա տեղեկատվական տեխնոլոգիաների հետ աշխատող ընկերությունների գործունեության տարբեր կողմերին, ինչպես նաև՝ ՏՏ կիրառությանը ժամանակակից կազմակերպությունների աշխատանքում:

**Ներկայումս աշխատում եմ Meettal ընկերությունում՝ որպես տեխնիկական հավաքագրման մասնագետ (recruiter):**